ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ 7
Հեռ. /0264/2-10-45, Ֆաքս /0264/2-41-75
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mtaes.am

N_____

------- ----------2017թ.

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ,
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՊԱՐՈՆ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 06.06.2017 թվականի գրության, տեղեկացվում է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Փամբակ համայնքի բնակիչ Լիդա Դաշյանի վթարային բնակարանի վերաբերյալ հարցը տեղում ուսումնասիրվել և բազմիցս քննարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմում:

Հայտնվում է, որ Փամբակ համայնքի ղեկավարը 19.07.2016թ. N12 գրությամբ մարզպետարան է ներկայացրել Լ.Դաշյանի ընտանիքին պատկանող՝ Փամբակ գյուղի 8-րդ փողոցի N 5 հասցեում գտնվող, բնակելի տան տեխնիկական վիճակի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը: ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման» հայեցակարգի պահանջներով, 02.09.2016թ. N01/08/3346-16 գրությամբ Լ.Դաշյանի բնակելի տան վերաբերյալ փաստաթղթերը ներկայացրել է ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե՝ վթարային բնակելի ֆոնդում բնակվող բնակիչների բնակային պայմանները բարելավմանը նպակաուղղվող ծրագրերում ընդրկելու նպատակով, որի վերաբերյալ տեղեկացվել է նաև քաղաքացուն:

Միաժամանակ հայտնվում է, որ 2017 թվականի պետական բյուջեով բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար միջոցներ նախատեսված չեն:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Քաղաքաշինության վարչության պետ
Ա.Զոհրաբյան
Կատ.Խ.Բուդումյան
/0264/28354